

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ-ՅՈՒՔՈՄ»
 ՀԱՄԱՏԵՂ ՔԱՐՏԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Համատեղ վարկային քարտի տրամադրման ընդհանուր պայմաններն են.

Դրույթ	Պայման/Սակագին
1 Քարտի տեսակը	Arca/MasterCard
2 Քարտի արժույթը	ՀՀ դրամ
3 Քարտի թողարկում	անվճար
4 Քարտի տարեկան սպասարկում	անվճար
5 Հավելյալ քարտի թողարկում	անվճար
6 Քարտի գործողության ժամկետ	2 տարի/4 տարի
7 Վարկային գծի գործողության ժամկետ (ArCa քարտերի դեպքում)	2 տարի
8 Վարկային գծի Ստանդարտ սահմանաչափը	Մինչև 400,000 ՀՀ դրամը (ներառյալ)
9 Օգտագործված վարկային գծի դիմաց հաշվարկվող տոկոսադրույքը	տարեկան 6%
10 Վարկային գծի մարման արտոնյալ ժամանակահատված	չի սահմանվում
11 Վարկային սահմանաչափի ավելացում	2,000 դրամ
12 Քարտի վերաթողարկում (կորստի կամ վնասման դեպքում)	2,000 դրամ
13 Քարտի վերաթողարկում (քարտի ժամկետի լրացման դեպքում)	անվճար
14 Քարտի բլոկավորում / ապաբլոկավորում	անվճար
15 Կանխիկի տրամադրում.	
14.1 «Ամերիաբանկ»-ի կանխիկացման կետերում	1.5%
14.2 Արմենիան Քարդ համակարգի անդամ-բանկերի կանխիկացման կետերում	1.5%
14.3 Արմենիան Քարդ համակարգից դուրս բանկերի կանխիկացման կետերում	1.5%, առնվազն 1,500 ՀՀ դրամ
16 Քարտից քարտ կատարվող փոխանցումներ	1.5%
17 Քաղվածքի տրամադրում կամ ուղարկում էլեկտրոնային փոստով	անվճար
18 Գործարքի վերաբերյալ SMS հաղորդագրությունների ստացում	անվճար

2. Համատեղ քարտով Վարկային գծի տրամադրման ընդհանուր պայմաններ

2.1. ՅՈՒՔՈՄ ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) հետ համատեղ քարտը (այսուհետ՝ Քարտ) նախատեսված է Ընկերության ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների համար, ովքեր համապատասխանում են հետևյալ պայմաններին.

**«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ-ՅՈՒԲՈՄ»
ՀԱՄԱՏԵՂ ՔԱՐՏԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

- 2.1.1. կատարել են Ընկերության ծառայությունների դիմաց բաժանորդագրային վճարները առանց ուշացումների, և ամսական վարձավճարը կազմել է ամսական առնվազն 15,000 ՀՀ դրամ,
 - 2.3.1. ունեն հաշվառման հասցե, իսկ հաշվառման հասցեի բացակայության դեպքում գործընթացը իրականացվում է այլ ֆիզիկական անձի երաշխավորության առկայության դեպքում,
 - 2.3.2. չունեն ընթացիկ ժամկետանցություն և բոլոր վարկային պարտավորությունների գծով վերջին 2 (երկու) տարվա ընթացքում ժամկետանց օրերի ընդհանուր քանակը չի գերազանցում 30 օր / անընդմեջ 10 օր իսկ փոխկապակցված անձինք չունեն ժամկետանց և դասակարգված վարկեր:
 - 2.4. Վերը նշված պայմաններով համատեղ քարտերով վարկային գծերի ձևակերպման գործընթացը իրականացվում է Բանկի ներքին իրավական ակտերի համաձայն: Ընդ որում, վարկային գծի Ստանդարտ սահմանաչափի դիմած և 6 (վեց) ամիս և ավել Ընկերության բաժանորդ հանդիսացող անձանցից եկամուտը հիմնավորող փաստաթուղթ չի պահանջվի:
 - 2.5. Քարտով վարկային գծերի տրամադրման նվազագույն ժամկետ չի սահմանվում:
 - 2.6. Քարտերով վարկային գծերի չօգտագործված մասի դիմաց տոկոս չի հաշվարկվում:
 - 2.7. Վարկային գծի սահմաններում օգտագործված միջոցների դիմաց տոկոսները հաշվարկվում են փաստացի մնացորդի նկատմամբ՝ անվանական տոկոսադրույքի հիման վրա:
 - 2.8. Քարտով անկանխիկ վճարումները՝ միայն Նախագծի մասնակից առևտրի/սպասարկման կետերում, որոնց ցանկը ներկայացված է Բանկի և ՅՈՒԲՈՄ ընկերության պաշտոնական կայքերում:
 - 2.9. Նախագծի շրջանակներում տրամադրված ԱրՁա համատեղ քարտերով կանխիկացումը արգելափակված է:
- 3. Մարումների կատարման եղանակը**
- 3.1. Վարկառուն պարտավոր է մարել վարկային գծի օգտագործված գումարի դիմաց հաշվարկված տոկոսագումարը և ամսական կտրվածքով օգտագործված գումարի 10%-ը՝ առնվազն 10,000 ՀՀ դրամ մինչև հաջորդ ամսվա 21-ը ներառյալ:
 - 3.2. Ամսական կտրվածքով վարկային գծի օգտագործված գումարի դիմաց հաշվարկված տոկոսագումարը սահմանված ժամկետում երկու ամիս անընդմեջ չմարելու դեպքում, Բանկը իրավունք ունի պարտադրել հաճախորդին մարել օգտագործված վարկային գիծը և կուտակված տոկոսները, և դադարեցնել վարկային գծի սպասարկումը:
- 4. Քարտով վարկային գծի երկարաձգում**
- 4.1. Քարտով տրամադրված վարկային գիծը կարող է երկարաձգվել, եթե ապահովված են ստորև նշված պայմանները միաժամանակ.

**«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ-ՅՈՒՔՈՄ»
ՀԱՄԱՏԵՂ ՔԱՐՏԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

- 4.1.1. հաճախորդը Նախորդ 6 (վեց) ամիսների ընթացքում և ներկայումս հանդիսանում է ՅՈՒՔՈՄ ընկերության բաժանորդ, ամսական բաժանորդագրային վճարը կազմում է առնվազն 15,000 ՀՀ դրամ, որը վճարվել է առանց ուշացումների,
- 4.1.2. հաճախորդը համատեղ քարտով Նախորդ 1 (մեկ) տարվա ընթացքում, իսկ 1 տարուց պակաս սպասարկման ժամկետ ունեցող քարտերի դեպքում ամբողջ ժամանակահատվածում իրականացրել է առնվազն 1 (մեկ) անկանխիկ վճարում վերը նշված սպասարկման ցանցում,
- 4.1.3. Նախորդ 1 (մեկ) տարվա ընթացքում, իսկ 1 տարուց պակաս սպասարկման ժամկետ ունեցող քարտերի դեպքում ամբողջ ժամանակահատվածում, ԱՄԵՐԻԱԲԱՆԿ-ՅՈՒՔՈՄ Համատեղ քարտով վարկային գծի սպասարկման գծով ժամկետանց օրերի հանրագումարը չի գերազանցում 3 (երեք) օրը,
- 4.1.4. Նախորդ 1 (մեկ) տարվա ընթացքում հաճախորդի բոլոր վարկերի գծով ժամկետանց օրերի քանակը չի գերազանցում ընդհանուր 10 (տասը) օր / անընդմեջ 3 (երեք) օր:

5. Սույն փաստաթղթով սահմանված դրույթները համարվում են նվազագույն պահանջներ:

Քարտը կարող է օգտագործվել միայն Aray, Technolife, Fine, Vega խանութ սրահներում տեղադրված Բանկի Pos-Terminal-ներով վճարումներ կատարելու նպատակով: